ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<< Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց >> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կատարող՝ **ԷՄԻԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Առարկա՝ **Հայոց Լեզու և Գրականություն**

Ուսումնական հաստատություն՝ ՀՐԱԶԴԱՆԻ **N 6** ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

# Ներածություն

Նոր բարեփոխումներ են կատարվում հանրակրթական բնագավառում: Նոր չափորոշիչների, նոր ծրագրերի թատերաբեմում հայտնվում է առաջին հերթին դպրոցը: Դպրոցում է ձևավորվում երկրի ապագան կերտողի արժեհամակարգը: Այս պահին յուրաքնչյուրից պահանջվում է խելամտություն, ինքնուրույն, բայց գրագետ վերլուծություններ անելու կարողություն:

Ներկայումս կրթական նոր չափորոշիչի համապատասխան՝ ծրագրերը կյանքի կոչելու համար շատ կարևոր է հայոց լեզու և գրականություն առարկաների մեթոդաբանությունը, որը հնարավորություն կտա գտնել առարկաների ուսուցման արդյունավետությունը և գրավչությունը բարձրացնելու հնարներ և մոտիվացնել սովորողներին՝ ինքնուրույն աշխատանքներ կատարելու: Դրա համար արդեն խպետք է հենվել դպրոցի՝ իր գործառույթների շրջանակներում ստեղծած պատվարին և ստեղծել ազգային արմատներով և միջազգային չափորոշիչներով կրթության նոր համակարգ:

## Նապատակները.

- Զարգացնել սովորողների ներուժը, վերլուծական մտածողությունը
- Սովորողներին `ներգրավել խմբային աշխատանքի մեջ
- Ավանդական և փոխներգործուն մեթոդները համադրելով՝ բարձրացնել ուսուցման արդյունավետությունը
- Դասապրոցեսի ճիշտ կազմակերպման միջոցով՝ ճիշտ մեթոդներով և հնարներով, աշակերտների մեջ ձևավորել ինքնուրույն գործելու կարողություն
- Ձևավորել արժեհամակարգ ինքնավստահություն, ինքնուրույնություն, նպատակասլացություն

## Խնդիրները

- Ստեղծել համագործակցային մեթոդներով արդյունավետ աշխատելու միջավայր
- Ներգրավել սովորողներին դասի կազմակերպման գործում
- Խրախուսել պատկերավոր մտածելու և ստեղծագործելու փորձերը
- Ստեղծել անկանշկանդ մթնոլորտ ինքնաարտահայտվելու համար
- Նպաստել դասապրոցեսի ընթացքում միասնական, համախմբված, ապրումակցային միջավայրի ձևավորմանը:

# ԳԼՈՒԽ 1.

## ԳԻՏԵԼԻՔԸ՝ ԻԲՐԵՎ ԻՄԱՑԱԿԱՆ ԱՐԺԵՔ

<<Մարդ ձգտում է դեպի գիտելիքները, և հենց որ նրանում մարում է գիտելիքների ծարավը, նա դադարում է մարդ լինելուց:>>

**ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆ**

Ինչ-որ բանի հասնելու համար պետք է ջանք թափել, բայց խելամտորեն:Եվ այստեղ է, որ անհրաժեշտ է ունենալ գիտելիքի պաշար: Սակայն ինչպես Գյոթեն է ասում. << Գիտելիքը քիչ է, հարկավոր է նաև գործել>>: Իսկ անգլիացի փիլիսոփա Կառլայնը ավելացնում է. <<Գիտելիքը գրանցված փորձ է>>: Այդ գրանցված փորձը օգնում է մարդուն կյանքում ճիշտ ընտրություններ կատարել և ներդաշնակ ապրել շրջապատի և ինքն իր հետ:

Եվ ուսումնառության ընթացքում սովորողը ոչ միայն գիտելիք է ձեռք բերում, այլև ինքնուրույն մտածելու գործելու հնարներ է փնտրում, հմտանում դրանք կիրառելու եղանակնակների ու ձևերի մեջ, որով և զարգացնում նոր ուսումնական փորձառություն:

Գիտելիքի  խոր և համակողմանի ձեռքբերումը առավել ևս  կարևոր է մեր օրերում: Հայրենիքի կյանքում տեղ  գտած վերջին զարգացումները, պատերազմը, գաղթը երկրի ներկայիս ծանր ու անկայուն վիճակը վկայում են, թե որքան մեծ տեղ պետք է տրվի կրթությանը և մրցունակ գիտելիքին մեր կյանքում: Մեր կրած փորձությունը և շարունակվող դժվարությունները առավել շեշտադրում են նաև ճշմարիտ արժեքներով կերտված աշխարհայացք, վեհ իդեալների ու ձգտումների կարևորությունն ու պահանջը, որոնք նախ և առաջ սերմանվում, աճում ու զարգանում են դպրոցում: Գիտելիքը ամենահզոր զենքն է: Դարերի ընթացքում մեր ժողովուրդը մաքառել ու գոյատևել է և իր կյանքը կերտել ու վերակերտել է ամբարած գիտելիքի, ճանաչողության ու հմտությունների շնորհիվ: Հենց այսօր հայրենիքի անվտանգությունն ու  պաշտպանությունը պետք է խարսխված լինեն սովորողներիր ձեռք բերած գիտելիքների, ինքնաճանաչողության, հայրենասիրության ու ազգասիրության վրա:

## ԳԼՈՒԽ *2*.

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ժամանակակաից դպրոցը, ժամանակակից ուսուցումը, իհարկե, նախկին լինել չի կարող: Այս նոր գործընթացները ուսուցման նոր ծրագրերի առկայությունը հանգեցնում են նրան, որ սովորողների մոտ ուժեղանում է քննադատական մտածողությունը, նոր հայացքների ու համոզմունքների ձևավորումը: Հնարավորություններն ու հմտությունները դառնում են անսահմանափակ, շատերն արդեն բազմաթիվ բաց հարթակներից գտնում են իրենց հետաքրքրություններն ու պատասխանները: Դրանք պետք է ճիշտ համակարգել, ուղղորդել, իսկ երբեմն էլ կարծրացած մոտեցումները ձևափոխել:

Դա է ժամանակի առաջընթացի նախապայմանը: Սա նշանակում է,որ գրականության դասական արժեքները, որոնք մարդկության հավերժական ուղեկիցներն են, պետք է նորովի մատուցվեն, թարմ տեխնիկական ու մեթոդական միջոցներով, որպեսզի չխզվի դասական արժեքների և ժամանակակից մտածողության կապը: Ուսուցիչը ճշմարտության և իր արժեհամակարգի դիտանկյունից պետք է անդրադառնա և արդարացի վերլուծության ենթարկի սովորողի մոտ առկա կրթադաստիարակչական ցանկացած երևույթ: Անշուշտ չպետք է շրջանցել ազատ մտքի արտահայտման և հանդուրժողականության միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը:

Մայրենին՝ որպես առարկա, այդ տեսանկյունից ունի լայն հնարավորություններ աշակերտներին բացահայտումների ճանապարհով տանլու համար: Դասաժամերի ընթացքում սդպրոցականին առաջադրվում են նոր գործիքներ՝ ճանաչելու աշխարհը, մարդկանց և հենց իրեն: Այս կերպ դպրոցական վաղ տարիքից արդեն դրվում են աշակերտի հետազոտական հմտության ձևավորման հիմքերը:

Ճիշտ է այսօրվա դպրոցականը այնքնան էլ Ջոն Լոքի ասած <<անգրել գրատախտակը>> չէ, և, անկասկած, այն փոխելու անհրաժեշտություն է առաջանում:

Այստեղ կարևոր է ուսուցչի վարպետությունը, որպեսզի կարողանա ուղղորդել նրա լեզվամտածողության ճիշտ զարգացումը, նպաստի մտավոր թռիչքներին, խրախուսի ստեղծագործական ունակությունները, և վերջապես, նրան տալ ինքնարժևորման բանալին: Պատահական չէ, որ հայոց լեզուն և գրականությունը, լինելով առանձին առարկաներ, ցածր դասարաններում ինտեգրված են <<Մայրենի>> առարկայի մեջ և ընկալվում են, որպես մեկ ամբողջություն: Աշակերտը, արդեն զինված որոշակի գիտելիքներով, 7-12-րդ դասարաններում տարանջատված է ուսումնասիրում այդ առարկաները:

## ԳԼՈՒԽ *3*.

## ԻՆՉՊԵՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՄԵՆԱՄՈՏ ԸՆԿԵՐԸ

Գրականությունը արվեստի տեսակ է, արվեստների մայրն է: Գրականությունը մարդու մեջ դաստիարակում է վեհի, բարձրի, գեղեցիկի, հերոսականի զգացողությունը: Այս ամենը ներկայցվում է գրողների որոշակի երկերով, գրական կերպարների միջոցով:Գրականությունը մարդկության, սիրո դասեր է տալիս:

Գրականությունը նպատակ ունի հղկելու մայրենի լեզուն, որովհետև լեզվի օրենքները մի բան են, երբ լեզուն սովորում են ըստ քերականական օրենքների, իսկ բառապաշարը, ոճը, անթերի հայերենը՝ մեկ այլ բան:

Անվերջ կարելի է խոսել գրականության դերի և նշանակության մասին: Հավելեմ նաև, որ գրականությունն ի սկզբանե ունեցել է մի կարևոր առաքելություն. մշտարթուն եղել է հայ ժողովրդի պատմական ճակատագրի ուղեկիցը: Հայ գրականությունը հայոց պատմական հոգեկերտվածքի գեղարվեստական խտացումն է:

Գրականությունը կարող է դառնալ դեռահասի ամենամոտ ընկերը, ուղեկիցը, ներազդել սովորողի զգացմունքների և մտքի վրա:

Դեռահասության ընթացքում շատ աշակերտներ հաճախ ընկնում են մենակության գիրկը և կտրվում իրական կյանքից: Նրանք ամփոփվում են իրենց աշխարհում և ամենափոքր բախումից մեծ ցնցում են ապրում:

Այստեղ է, որ հույզերի օվկիանոսում հայտնված աշակերտին օգնության կհասնի մեծն գրականությունը: Նա կգտնի իր բազում հարցերի պատասխանը, նոր բացահայտումներ կանի: Ավելին, կտեսնի կյանքն ու աշխարհը նոր լույսի ներքո և կգնահատի ու կարժևորի այն: Ու անընդգրկելի տիեզերքում իր աշխարհը կգտնի՝ իր երազանքների մոլորակը: Հենց սա է գրականության մոգական ուժը: Բնությունն ամեն ինչի մասին այնպես է հոգացել, որ բոլորը ամեն տեղ գտնեն սովորելու, ինքնահաստատվելու, ինքնամաքրվելու ուղիներ:

## ԳԼՈՒԽ 4

## ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

<<Ապրել և մեռնել հայրենիքի համար>> ըստ Աբովյանի՝ կարևոր տեղ պետք է տալ երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Դա պետք է անել ավելի վաղ տարիքից: Ամեն ոք իր կյանքի նպատակը պիտք է համարի ապրել և մեռնել

հայրենիքի համար: Հայրենիքը կանգուն կմնա այդպիսիների շնորհիվ: Գեղարվեստական գրականության միջոցով յուրաքանչյուր աշակերտ, իր տարիքին համապատասխան, ձեռք է բերում դրանց խորքերը թափանցելու, մեկնաբանելու կարողություններ:

Կան թեմաներ, որոնք իրենց առանձնահատկություններով, նրբերանգներով զուտ ազգային են: Մեզ համար հատկապես խոցելի է պանդխտության թեման:

Պանդխտությունը խորը արմատներ ունի ու, ցավոք, նա արդիական է: Բոլորս ենք առնչվում այդ խնդրին, բայց դպրոցականի զգայուն հոգին դրան առնչվելիս մեծ դրամա է ապրում: Ուստի այդ թեմաները անցնելիս կարևոր է, որ ճիշտ մեկնաբանվեն պատճառներն ու հետևանքները: Այդպիսի թեմաներն անցնելիս աշակերտը անհրաժեշտ է, որ ասի իր փաստարկված խոսքը: Նա վճռական դարձ կկատարի իր արմատները, դեպի իր հոգու զարթոնքը, կսթափվի անդառնալի կորստից: Հայ ժողովրդի համար ասես ճակատագիր դարձած հայոց թեման ամփոփելով՝ այնուամենայնիվ աշակերտների մեջ պետք է պահել լավատեսական ոգին:

Ոգին ամրացնելը հայ ժողովրդի խորը բա՞նզդն է, թե՞ կոչումը: Նարեկացին Մատյանով հոգևոր Հայաստան էր գրում: Նրանից առաջ Եղիշեն հոգևոր Հայաստան չէ՞ր գրում... նրանից հետո՝ Թումանյանը, Տերյանը, Չարենցը ... Արդյունքում՝ դարերի գագաթը հասած մի ափի չափ Հայաստան և տիեզերքի պես անեզր ու անչափելի հոգևոր Հայաստան:

Հայերիս համար, անտարակույս, հայրենիքը բացարձակ արժեք է, բայց այն նուրբ ազգային երանգներ ունի, և հայրենասիրությունը սոսկ հայրենիքը սիրելը չէ, հայրենիքը, պետությունը պահելն ու պահպանելն է: <<Մարդկությունը սիրիր, մարդկության չափ մեծ կլինես>> ,- ասում էրնԻսահակյանը: Մարդկությունը սիրելուց առաջ մարդ պետք է սիրի իր ազգը, իր ժողովրդին, քանի որ այն մարդկության մի մասնիկն է: Եթե սիրում ես քո ազգը, ուրեմն հայենասեր ես:

# ԳԼՈՒԽ *5*

# ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

***1.*Ինչպես զարգացնել աշակերտների մոտ հայրենասիրական թեմաները ընկալելու, վերլուծելու կարողությունները:**




Հայրենիքի ճակատագրի հետ կապված շատ իրողություններ կատարվում են հենց այսօր:

Մենք բոլորս դրա ականատեներն ենք: Աշակերտները կատարում են ինքնուրույն դատողություններ, վերլուծություններ ներկա օրերում կատարվող դեպքերի վերաբերյալ: Եվ գրականության դասժամերին աշակերտի մոտ պետք է ձևավորել այն համոզմունքը, որ հենց իրենցից է սկսվում հայրենիքը, որ յուրաքանչյուրիցս է կախված մեր երկրի ապագան, մեր համերաշխ ընտանիքից, դասարանից, միջավայրի, անձնական շահը ազգայինին ստորադասող հասարակությունից, միասնական ազգից ու գաղափարախոսությունից: Չարենցի պատգամը այսօր էլ աղաղակում է. <<Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է>>: Եվ ուսուցչի խնդիրը հենց այն է, որ, գործածելով ամենատարբեր մեթոդներ և միջոցներ, միջառարկայական կապեր. ցանկացած թեմա

բերի հետաքրքրությունների դաշտ և աշակերտներին մղի բացահայտումների, նրանց մեջ ինքնուրույն մտածելու, սովորելու ինքնաբուխ ցանկություն առաջացնի: Դասավանդման նոր մոտեցումները պարզ են. վերակենդանացել ձանձրալին, գրավել ստեղծագործական մոտեցումներով: Այս դասերը ներառում են մեթոդների բազմազանությունը, հատկապես, ինչպիսիք են խնդրի վրա հիմնված ուսուցումը, միջառարկայական և ներառարկայական հաղորդակցությունները: Անտարբերությունը թուլանում է, մտածողությունը աշխուժանում, ոգևորվում և մեծանում է հետաքրքրությունն ընդհանուր առարկայի նկատմամբ: Նոր մեթոդներով դասերի վարումը օժանդակում է երեխաների լեզվական հաղորդակցման հմտությունների զարգացմանը և նրանց անհատական ստեղծագործական կարողությունների բացահայտմանը, այսինքն՝ նպաստում են սովորողների մայրենի լեզվով գրագետ հաղորդակցվելու տարբեր իրավիճակներում կողմորոշվելու, ինքնադրսևորվելու, գնահատելու և այլ կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Աշխատանքի այս տեսակն ակտիվացնում է սովորողների մտավոր և խոսքային գործունեությունը, զարգացնում նրանց երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, հետաքրքրությունը և՛ առարկայի և՛ ուսուցանվող թեմայի նկատմամբ:

<< Քելե լաո>> բանաստեղծության դիտարկման միջոցով ինչպես կազմակերպել դասապրոցեսը և ինչպես նպաստել ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Ուսումնասիրության նախապատրաստական փուլ:

Պարզաբանվում են դասի նպատակն ու խնդիրները: Դրանից հետո աշակերտները ներգրավվում են իմաստավորված ստեղծագործական աշխատանքների մեջ: << Խթանման>> փուլում կիրառվում է << Նախնական կազմակերպիչ>> մեթոդական հնարքը: Այս մեթոդը շատ արդյունավետ է ստեղծագործական ունակությունների զարգացման համար: Գրատախտակին կամ ցուցապաստառին գրված են բանաստեղծության հետ առնչվող բառեր և բառակապակցություններ.մանգաղն առած, մախաղը մեջքին, համառ մի ուխտ ու հարցում, կա սահման ու կա վեճ, հոգու միամիտ կանչն է իր մեջ, խռովքը Սասնա տան դաշտն են Աստված, երկիր ու երկինք, իմա՞լ չերթանք մեր Էրգիր:

1) Ի՞նչ է կատարվելու
2) Ինչպես են կապվել այդ բառերը, և դարձել բանաստեղծություն
3) Գրել 5 րոպեանոց շարադրանք

Նոր նյութի հաղորդում

Կարդալ բանաստեղծությունը, ունկնդրել երգը: Գտնել ընդհանրություն երգի և բանաստեղծության մեջ:

Իմաստի ընկալման փուլում կիրառվում է <<Մանրապատում>> մեթոդը: Սովորողի մոտ զարգանում է էականը, կարևորը նկատելու, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու մտավոր կարողությունները:

1. Մեկ նախադասությամբ գրիր, թե ինչի մասին է մանաստեղծությունը

2. Ստեղծագործությունից ընտրիր մեկ հղում, որ բնութագրում է այն:

3. Մեկ բառով բնութագրիր ստեղծագործությունը:

4. Նկարիր խորհրդանիշ, որն արտահայտում է ստեղծագործության միտքը:

5. Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ գույնի էր ստեղծագործությունը:

6. Ի՞նչ երաժշտություն հիշեցիր այս ստեղծագործությունը կարդալիս;

7. Շարունակիր միտքը. Բանաստեղծությունը այնքան արդիական է, որովհետև ...
Կարելի է կիրառել նաև <<3 բանալի և մեկ կողպեք>> մեթոդը: Այս դեպքում արդեն նախընտրելի է խմբային աշխատանքը: Խմբերը ներկայացնում են իրենց գրածը և ձևակերպում բանաստեղծության գաղափարը:

Այս և նմանատիպ աշխատանքները ամրապնդում են գիտելիքների ինքնուրույն որոնման հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներ են:

Ստեղծագործական հմտություններն ու ունակություններն ցայտուն դրսևորում է կշռադատման <<Հաստ և բարակ>> հարցերի աղյուսակը լրացնելով: Քարտերը բաժանվում են աշակերտներին, որոնցից կպահանջվի կատարել ինքնուրույն դատողություններ, կբացահայտվեն յուրաքանչյուրի նախաձեռնողական հմտությունները:

| << Հաստ հարցեր >> | << Բարակ հարցեր >> |
|---|---|
| . 3 բացատրություն բերեք, թե ինչու ... | .Ո՞վ ... |
| . Բացատրեք՝ ինչու ... | . Ի՞նչ ... |
| . Ինչու՞ եք դուք մտածում, որ ... | . Երբ ... |
| . Ինչու՞ եք գտնում, որ ... | . Հնարավոր է, որ ... |
| . Ո՞րն է տարբերությունը ... | . Ինչպես անվանել ... |
| . Ենթադրենք՝ ի՞նչ կլինի, որ ... | . Ե՞ղել են արդյոք ... |
| . Ի՞նչ եթե ... | . Համաձա՞յն եք դուք ... |

Սովորողները կարդում են իրենց գրածները, կատարում են լրացումներ ու շտկումներ, եթե այդպիսիք կան և մտքերի փոխանակության արդյունքում թեման ամբողջացնում է, գիտելիքը՝ կայունանում:

Այնուհետև անդրադարձ է կատարվում և հնարավոր է լինում պարզելու ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի ձեռքբերումները և բացթողումները, դժվարություններն ու խոչընդոտները:

Հարկ է շեշտել, որ ուսուցման այսպիսի ակտիվ մեթոդները նպաստում են սովորողների ազատ ու ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու, հմտությունների զարգացմանը:

Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր ուսուցիչ գրականության դասաժամերին ստեղծի այնպիսի պայմաններ, որ դասի ընթացքում սովորողի դերը լինի ավելի ակտիվ, հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի, վերլուծի, նոր լուծումներ գտնի: Բնական խոսքը, սեփական մտքերը առանց կշռադատելու և սխալվելու արտահայտելը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, գեղեցկացնի այն, բացահայտի իր ստեղծագործական ներուժը:

Ծանր, աշխատատար պատասխանատվություն ունի ուսուցիչը: Ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել և ինչու՞ սովորեցնել. ահա հարցադրումները որոնք կազմում են ուսուցման գործընթացի միջուկը: Գիտելիքն արժևորող աշակերտ, պրպտող միտք, ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ուակությունների դրսևորում: Եվ այս ամենը միասին կդառնան ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանն ուղղված առաջին քայլերի ռազմավարությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները պետք է նպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռք բերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռք բերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից ինքնուրույնությանը նպաստող միջոց: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են նախաձեռնություն, ստեղծագործական կարողությունները բացահայտելու կարողություն: Կարելի է ասել, ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողները դրսևորում են գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

## Օգտագործված գրականություն

1. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ – Կրթության ազգային ինստիտուտ

2. Գրականություն 7-րդ դասարան- Դավիթ Գասպարյան

3. Մանկավարժական միտք, բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում- Վ. Զաքարյան

4. Մեծերի մտքեր, աֆորիզմներ